ՆԱԽԱԳԻԾ

Արձանագրային

… ..... 2016թ. ..... N.....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետությունում 2017-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգին (այսուհետ՝ հայեցակարգ)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն հայեցակարգն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաստատել <<Հայաստանի Հանրապետությունում 2017-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2016 թվականի

_____ ____ -ի N արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. . . . .

2.ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. . . . .

3.ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐԸ. . . . .

4.ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ. . . . . .

5.ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ. . . . . .

6.ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. . . . . .

7.ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. . . . .

8.ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ. . . . . .

Ի.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովումն ագրարային քաղաքականության հրատապ հիմնախնդիրներից է, որը պահանջում է ժամանակակից չափորոշիչներին համապատասխան լուծումներ:

2. Հայաստանի Հանրապետության սահմանափակ հողատարածքի և բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական նշանակության հողատեսքերով ապահովվածության ցածր մակարդակի պայմաններում կարևորվում է պարենի արտադրության նպատակով բնական պաշարների առավել արդյունավետ օգտագործումը:

3. Հանրապետությունում մեղվաբուծությունը զարգացնելու համար առկա են նախադրյալներ, որոնք հիմնականում պայմանավորված են հանրապետության մեղվաբուծության կերաբազայով: Անհրաժեշտ է լիարժեք օգտագործել ենթաալպիական և ալպիական գոտու բուսական ռեսուրսները, որն իր բազմատեսակ և հարուստ բուսականությամբ հնարավորություն կստեղծի ստանալ բարձր որակական և համային հատկանիշներով բնական մեղր և մեղվաբուծական այլ մթերքներ:

4. Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծությունը գյուղատնտեսության հնագույն ճյուղերից է: Ներկայումս մեղվաբույծների մի ստվար հատված տիրապետում է մեղվաբուծության արդյունավետ վարման հարուստ փորձի և հմտությունների, որոնց ներուժի լիարժեք օգտագործումը մեղվաբուծության արդյունավետության բարձրացման կարևոր նախադրյալներից է:

5. Մեղվաբուծության զարգացումը հանրապետությունում կնպաստի սահմանամերձ գյուղական բնակավայրերի բնակչության զբաղվածության և պարենային անվտանգության ապահովմանը:

6. Մեղուների միջոցով՝ գյուղատնտեսական կուլտուրաների խաչաձև փոշոտմամբ բարձրանում է բերքի որակական և քանակական հատկանիշները: Մեղվաբուծության դերն ու նշանակությունը ագրոէկոլոգիական, բուսաբուծության և այգեգործության զարգացման գործում անփոխարինելի է:

7. Հաշվի առնելով հանրապետությունում մեղվաբուծության ընդլայնման և զարգացման զգալի ներուժը և գյուղական բնակավայրերում զբաղվածության ապահովման, կայուն եկամուտների ձևավորման, պարենային անվտանգության մակարդակի բարձրացման և արտաքին ապրանքաշրջանառության բարելավման անհրաժեշտությունը, առաջնահերթ խնդիր է դարձել մեղվաբուծության զարգացման գործում պետական քաղաքականության իրականացման մոտեցումների կիրառումը:

8. Բացի սննդից մեղուները նպաստում են նաև այլ մշակաբույսերի աճին, որոնցից ստանում են բիովառելիք, դեղամիջոցներ և անասնակեր: Փոշոտումը գյուղատնտեսական ներդրում է, որն ապահովում է առատ բերք ամբողջ աշխարհում: Որոշ մշակաբույսեր հանդիսանում են ֆերմերների համար եկամտի կարևոր աղբյուր, հատկապես զարգացող երկրներում: Մեղվաբուծության կայուն զարգացման շնորհիվ ստեղծվել են միլիոնավոր աշխատատեղեր ամբողջ աշխարհում:

9. Փոշոտումը ունի կարևոր ազդեցություն նաև ամբողջ էկոհամակարգի համար: Այն դրական ազդեցություն ունի կենսաբազմազանության համար: Մեղուները և այլ փոշոտողները հանդիսանում են կարևոր կենսական ցուցանիշ շրջակա միջավայրի համար:

10. Կարևորելով մեղվաբուծության զարգացումը, միջազգային կառույցների կողմից առաջարկվել է մայիսի 20-ը հայտարարել մեղվաբույծների համաշխարհային օր:

II.ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

11. Հայերը դեռևս շատ հին ժամանակներից զբաղվել են մեղվաբուծությամբ: Մաղվաբուծությունից ստացվում է մեղր, մոմ, ակնամոմ, մայրակաթ, մեղվի թույն: Մեծ է մեղուների դերը գյուղատնտեսական կուլտուրաների փոշոտման գործում, նաև մեղրը համարվում է արժեքավոր և դիետիկ սննդամթերք: Մեղրամոմը ըստ նշանակության հանդիսանում է մեղվաբուծության երկրորդ մթերքը: Այն օգտագործվում է արդյունաբերության 40 և ավելի ճյուղերում: Մայրակաթը օգտագործվում է մի շարք հիվանդություններ բուժելու, ինչպես նաև երեխաների աճը արագացնելու համար: Մեղվի

թույնը բարձր արդյունք է տալիս ռևմատիզմի, իշիազի և մի շարք հիվանդությունների համար: Ակնամոմը օժտված է բարձր մենրէասպան հատկությամբ, իսկ ծաղկափոշին մեծ կիրառություն ունի ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան բժշկության մեջ:

12. Վերջին 50 տարիների ընթացքում գյուղատնտեսությունը դարձել է չափազանց կախված փոշոտումից: Աշխարհի սննդի մեկ երրորդը կախված է փոշոտումից: Մշակաբույսերի փոշոտումը տարեկան գնահատվում է 153 մլրդ եվրո, իսկ Եվրոպայում 22 մլրդ եվրո: Եվրոպայում մարդկանց սպառման համար նախատեսված հիմնական մշակաբույսերի մոտ 84%-ը փոշոտման կարիք ունի արտադրության որակի և բերքատվության բարձրացման համար:

13. Գյուղատնտեսական ավելի քան 50 տեսակի մշակաբույսեր խաչասերվում են մեղրատու մեղուների միջոցով, որը նպաստում է դրանց բերքատվության բարձրացմանը, մասնավորապես հնդկացորենի, արևածաղկի սերմի բերքատվությունը բարձրանում է 50-60%-ով, երեքնուկինը, առվույտինը և կորնգանինը՝ 50%-ով, պտղատու տեսակի խաղողի որոշ տեխնիկական սորտերինը՝ 40-50%-ով: Այս դեպքում մեղրատու մեղուներից ստացվող եկամուտը 10-15 անգամ ավելի է, քան անմիջապես մեղրից և մեղրամոմից ստացվող եկամուտը: Եվրոպական մի շարք երկրներ մեղվաընտանիքներին գլխավորապես օգտագործում են գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման նպատակով, գործնականում այգեգործության և գյուղատնտեսական այլ մշակաբույսերի արտադրությամբ զբաղվող տնտեսություններում լայնորեն կիրառվում է մեղվափեթակների վարձակալությունը, որը փոխշահավետ տարբերակ է մեղվաբույծի և այգեգործի համար:

14. Հաշվի առնելով մեղվաբուծության դերն ու նշանակությունը ժողովրդա-տնտեսական ոլորտում, սույն հայեցակարգի նպատակն է բարձրացնել մեղվաբուծության վարման կուլտուրան, ավելացնել մեղրի և մեղվամթերքների արտադրության ծավալները, որը կնպաստի երկրի պարենային ծրագրի իրականացմանը:

III. ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐԸ

15. Մեղվաբուծությունն իր ուրույն տեղն է զբաղեցնում և մեծ դերակատարություն ունի գյուղատնտեսության մեջ, բուսաբուծության ոլորտում: Մեղուներով պայմանավորված է շուրջ 150 բուսատեսակների փոշոտումը, օրինակ Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեղրատու մեղուների կողմից փոշոտումից ստացվող շահույթը կազմում է 7,5մլրդ դոլար, այն դեպքում երբ տարեկան արտադրվում է 110000 տոննա մեղր՝ մեկ շնչի հաշվով շուրջ 0,5 կգ: Ռուսաստանի Դաշնությունում մեղուների փոշոտման արդյունքում արտադրված լրացուցիչ բերքի համախառն արժեքը կազմում է 80մլն դոլար:

16. Որակյալ այգեգործության կարևոր նախադրյալներից է մեղվափեթակների ճիշտ դասավորվածությունը ՝ եղանակի ոչ բարենպաստ պայմաններում մեղվանոցները պետք է տեղադրել ինչքան հնարավոր է այգուն մոտ, նույնիսկ անմիջապես այգու մեջ, այգու ամեն 25 հեկտարի համար պետք է հաշվարկել 50-60 մեղվաընտանիք, իսկ եթե այգու մակերեսը փոքր է 25 հեկտարից, ապա մեղվափեթակները տեղակայվում են տարածքի կենտրոնում:

17. Ներկայումս Հայաստանի Հանրապետության մեղվաբուծության ոլորտի հմուտ տնտեսավարողները ունեն մեղվաբուծության վարման դարավոր հարուստ փորձ:

18. Հայաստանում տարածված են դեղին ու գորշ մեղուների պոպուլյացիաները: Հյուսիսային տարածաշրջաններում առավել արդյունավետ է գորշ, իսկ հարավում՝ դեղին մեղուների բուծումը, խնամքը և բազմացումը:

19. Մեղվաբուծության բնագավառում իրենց ուրույն տեղն ունեն <<Հայաստանի մեղվապահների ազգային ֆեդերացիա>>, <<Մեղվաբույծների Ազգային Միավորում>> և <<<<Ապի Արմենիա>> Արհեստավարժ Մեղվաբույծների Ազգային Միավորում>> հասարակական կազմակերպությունները:

20. Մեղվաբուծության ոլորտում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող <<Մուլտի Կոնցեռնի>> <<Մուլտի-Ագրո>> գիտաարտադրական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը միակ կազմակերպությունն է, որը Մեղրիի փորձարարական բազայում զբաղվում է հայկական դեղին մեղվի գենոֆոնդի պահպանմամբ:

21. Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառվել է շուրջ 241546 մեղվաընտանիք, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է շուրջ 6332 միավորով կամ 2,6%-ով: Մեղվաընտանիքների աճի դրական միտում է նկատվում նաև 2016թվականի առաջին եռամսյակում: Մեղվաընտանիքների քանակը՝ ըստ մարզերի, 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ներկայացված է N1 գծապատկերում:



Գծապատկեր 1. Մեղվափեթակների քանակը՝ ըստ մարզերի(01.01.2016թ. դրությամբ)

22. Ներկայումս հանրապետությունում տարեկան արտադրվում է 3500-4000 տոննա ապրանքային մեղր: Արտադրվող մեղրի բարձր որակական հատկանիշների շնորհիվ սահմանափակ քանակությամբ այն արտահանվում է Անկախ պետությունների համագործակցության երկրներ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Շվեյցարիա, Չինաստան, Կիպրոս և այլն: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական

ծառայության կողմից կատարված աշխատանքների շնորհիվ ձեռք է բերվել եվրոպական մի շարք երկրներ մեղր արտահանելու թույլատվություն:

23. Հանրապետությունում վերջին տարիներին նկատվում է մեղրի արտահանման ծավալների զգալի աճ: 2013 թվականին արտահանվել է 2.4 տոննա մեղր, 2014 թվականին՝ 4.2 տոննա, 2015 թվականին՝ շուրջ 11 տոննա:

24. Բացի բնական ծաղկային և մեղրացողային մեղրից հանրապետությունում փոքր ծավալներով արտադրվում են նաև մեղվաբուծական այլ մթերքներ՝ մեղվակաթ, մեղվաթույն, ակնամոմ, ծաղկափոշի և այլն, որոնք բավականին լայն պահանջարկ ունեն արտաքին շուկայում:

25. Վերջին տարիներին մեղվաբուծության բնագավառում առկա խնդիրների կարգավորման՝ հատկապես մեղուների վարրոատոզ հիվանդության կանխարգելման նպատակով <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից 2013-2016 թվականներին հատկացվել է ընդամենը 30,8 մլն դրամ, որի շրջանակներում ձեռք է բերվել <<Բիպին>> բուժանյութը, որը անհատույց հատկացվել է հանրապետության մեղվաբույծներին: Արդյունքում կրճատվել են մեղուների անկումները, ավելացել է մեղվափեթակների թիվը և մեղրի արտադրության ծավալները:

26. Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծությունը հանդիսանում է ավանդական և եկամտաբեր ոլորտ: Պետության հետևողական և հստակ մշակված քաղաքականության առկայության դեպքում մեղվաբուծությունը մեծ հեռանկար կունենա, որն իր հերթին ազգաբնակչությանը կապահովի բարձրարժեք սննդամթերքի բավարար ծավալներով:

IV. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

27. Հայեցակարգի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման խթանմանն ուղղված ռազմավարության կիրառման

միջոցով ճյուղի արդյունավետության բարձրացումը, հանրապետությունում առկա մեղվանոցների խոշորացման և ամրապնդման հիման վրա նոր մեղվանոցների ստեղծումը, մեղվաբուծական արտադրանքի ծավալների ավելացումը, այլ մթերքների ստացումը, ապահովելով նպաստելու ոլորտի զարգացմանը, մեղրի որպես սննդամթերքի անվտանգության ցուցանիշի բարձրացումը, բուծվող մեղուների գենոֆոնդի պահպանումը և կատարելագործումը, ինչպես նաև մեղվաբուծական տնտեսությունների մրցունակության բարձրացումը:

28. Հայեցակարգի խնդիրներն են՝

1) գյուղատնտեսական մշակաբույսերի և այգիների արդյունավետ փոշոտումը,

2) մեղվաբույծներին մասնագիտական խորհրդատվության մատուցման մեխանիզմների կատարելագործման միջոցով գործընթացի արդյունավետության բարձրացումը,

3) սպառողների և տնտեսավարողների շրջանում մեղվաբուծական մթերքների օգտակարության և սպառման հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը,

4) պետական աջակցությամբ մեղուների հիվանդությունների կանխարգելումը,

5) ցուցադրական տնտեսությունների ստեղծումը,

6) մեղվաբուժության արդի տեխնոլոգիաների ներդրումը,

7) բուծվող մեղվացեղերի պահպանումը և բարելավումը,

8) Հայաստանի Հանրապետությունում արտադրված և հանրապետություն ներմուծված մեղրում մնացորդների ԵՄ-ի փորձարարարկման ռեֆերենս մեթոդներով փորձաքննությունների մոնիթորինգային ծրագրի իրականացման շարունակության ապահովումը:

V. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

29. Հայեցակարգի խնդիրների լուծման ուղիներն են՝

1) մասնագիտական խորհրդատվություն տրամադրել անբարենպաստ եղանակային պայմաններում մեղվաընտանիքների արդյունավետ օգտագործման նպատակով՝ այգիներում և ցանքատարածքներում մեղվափեթակների ճիշտ տեղաբաշխման ուղղությամբ: Նշված խնդրի լուծման դեպքում հնարավոր կլինի ապահովել այգիների փոշոտման արդյունավետությունը, արդյունքում կբարձրանա բերքի որակը, ինչպես նաև մեղրի արտադրության ծավալը: Խնդրի լուծումը ռիսկային չէ և էական ֆինանսական միջոցներ չի պահանջում,

2) գործող և ապագա մեղվաբույծների համար դասընթացների և խորհրդատվության կազմակերպում՝ դրանցում ընդգրկելով ոլորտի առաջավոր մասնագետներին և գիտնականներին: Վերջինս հնարավորություն կտա բարձրացնել մեղվաբույծների իրազեկվածության մակարդակը, ծանոթացնել միջազգային մեղվաբուծության առաջավոր փորձին, ինչը հնարավորություն կստեղծի բարձրացնել մեղրի որակական հատկանիշները, այն համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին: Խնդրի լուծումը ռիսկային չէ և այն կիրականացվի խորհրդատվական ծառայությունների միջոցով,

3) մեղվաբուծական մթերքների տեսականու ընդլայնման, հանրայնացման և մեղվաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների թվի և կարողությունների ընդլայնման նպատակով հանրապետության տարբեր մարզերում և Երևան քաղաքում մեղվաբուծությանն առնչվող ցուցահանդեսների, ցուցադրական տնտեսությունների կազմակերպում, ինչպես նաև միջազգային ցուցահանդեսներին, տոնավաճառներին և այլ միջոցառումներին մեղվաբույծների մասնակցությանն աջակցության ցուցաբերում: Նշվածը կխթանի մեղվաբույծների կողմից արտադրվող ապրանքի որակական հատկանիշների և ապրանքային տեսքի բարելավմանը, որը կնպաստի հանրապետության և միջազգային մեղվաբույծների միջև համագործակցության

ընդլայնմանը: Խնդրի լուծումը ռիսկային չէ և էական լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի պարունակում,

4) մեղուների վարրոատոզ և այլ հիվանդությունների նկատմամբ արդիական և արդյունավետ պատվաստանյութ (<<Բիվարոլ>>,<<Էկոստոպ>> և այլ) ձեռք բերելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարիներ շարունակ օգտագործվող <<Բիպին>> պատրաստուկի նկատմամբ վարրոատոզ հիվանդություն առաջացնող տզերը ձեռք են բերել ընկալունակություն, ուստի մեղվաբուծության մեջ տարածված վարրոատոզ հիվանդության տարածման կանխարգելման նպատակով նախատեսվում է այդ պատվաստանյութը փոխարինել <<Բիվարոլ>>, <<Էկոստոպ>> պատվաստանյութերով, որը կնպաստի հանրապետությունում ավելի առողջ մեղվաընտանիքների առկայությանը: Խնդրի լուծումը ռիսկային չէ, հաշվի առնելով պատվաստանյութի բազմամյա կիրառման փորձը և այն, որ դրանք Հայաստանի Հանրապետությունում ստացել են պետական գրանցում, իսկ ֆինանսական միջոցների հատկացումը ինչպես կատարվել է 2016 թվականի համար, նախատեսված է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից,

5) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող <<Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների մասնագետների միջոցով կազմակերպել սկսնակ մեղվաբույծների վերապատրաստումներ, դասընթացներ, դպրոցական խմբակներ և ոլորտի զարգացումը խթանող այլ միջոցառումներ՝ համագործակցելով <<Հայաստանի մեղվապահների ազգային ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության հետ: Նշված խնդրի լուծումը կնպաստի մեղվաբուծությամբ զբաղվող տնտեսությունների ավելացմանը, արդյունքում մեղվաբուծական արտադրանքի ծավալների ավելացմանը: Միջոցառման իրականացումը ռիսկային չէ և լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի պահանջում,

6) մեղվաբուծության ոլորտում արդի ժողովրդական բուժանյութերի և արդիական մեթոդների կիրառման խթանում և խրախուսում: Նշված խնդրի լուծումը կնպաստի ժողովրդական ավանդույթների և արդիական նոր մեթոդների ներդրմանը,

7) հանրապետությունում արտադրվող մեղվամթերքի արտահանման գործընթացի աջակցության ցուցաբերում, նպաստելով հանրապետությունում մեղվաբուծության զարգացմանը և մեղվամթերքի արտադրության ծավալների ավելացմանը: Խնդրի լուծումը կնպաստի արտահանման ծավալների ավելացմանը, արդյունքում պայմաններ կստեղծվի արտադրվող մեղրի հատկանիշների բարելավման, ճյուղում եկամուտների ավելացման և արտադրանքի միջազգային ճանաչման համար: Խնդրի լուծումը ռիսկային չէ և էական լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:

VI.ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30. Հանրապետությունում մեղվաբուծության հանրայնացում, տեղական արտադրանքի միջազգային ճանաչում, մեղվափեթակների համակարգված և ճիշտ տեղաբաշխման շնորհիվ այգիների և ցանքատարածությունների փոշոտման արդյունավետության բարձրացում, մեղվաբուծական մթերքների արտադրանքի և արտահանման ծավալների ավելացում, մեղվաբույծների մասնագիտական ունակությունների կատարելագործում:

31. Հայեցակարգի իրականացումը նախատեսվում է ապահովել շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման, գիտակրթական հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ:

VII.ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

32. 33.Հանրապետությունում 2015 թվականի դրությամբ առկա էր 241546 մեղվափեթակ, որից ստացվել է մոտավորապես 3500 տոննա մեղր: Հայեցակարգից բխող միջոցառումները հնարավորություն կընձեռեն հուսալի նախադրյալներ ստեղծել Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման և առկա բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար: Հանրապետությունում մեղվանոցների խոշորացման և նորերի ստեղծման միջոցով հայեցակարգի իրականացման ժամանակահատվածում (2017-20թթ.) նախատեսվում է մեղվափեթակների թիվն ավելացնել մինչև 30000-ով և 2020թվականին ստացվող մեղրի ծավալը կավելանա շուրջ 450 տոննայով, որն էլ իր հերթին կավելացնի արտահանման ծավալները՝ կազմելով շուրջ 50 տոննա, 2015 թվականի 11 տոննայի դիմաց:

33. 34. Հայեցակարգի դրույթների կիրառումը կնպաստի հայրենական և օտարերկրյա ներդրողների շրջանում մեղվաբուծության ոլորտի նկատմամբ գրավչության բարձրացմանը:

VIII. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

34. 35.Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման 2017-2020թվականների հայեցակարգը կիրականացվի մասնավոր հատվածի, միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

35. 36.Մասնավոր ներդրողների ներգրավման միջոցով անհրաժեշտ կլինի 2017-2020 թվականների ընթացքում ապահովել շուրջ 1 մլդ. 950 մլն. ՀՀ դրամի ներդրում, որով հնարավոր է ձեռք բերել 30000 նոր՝ վաղ գարնանը բնակեցված մեղվափեթակներ, յուրաքանչյուրի արժեքը տատանվում է 50,0-ից 55,0 ՀՀ դրամի սահմաններում: Մնացած գումարը անհրաժեշտ է ձեռք բերված մեղվափեթակների բուժման միջոցառումների և այլ ընթացիկ ծախսերի համար:

36. 37. Հայեցակարգի իրականացման շրջանակներում մեղվաբույծներին մատուցվելու է խորհրդատվական շուրջ 30 ծառայություն, յուրաքանչյուրը 80,0 հազ. դրամ

արժողությամբ: Նախատեսվում է նաև հրատարակել շուրջ 10 000 խորհրդատվական բուկլետներ: Ընդհանուր առմամբ խորհրդատվական ծառայությունների մատուցման և բուկլետների տպագրության համար կծախսվի 3 500,0հազ. դրամ:

37. 38. Արտահանումը խթանելու և արտահանման ծավալները ավելացնելու նպատակով նախատեսվում է մեղվաբույծներին տրամադրել «2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ՁԿԱՆ ԵՎ ՄԵՂՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ծրագրի շրջանակներում մեղրում մնացորդների փարձաքննության ծառայություններ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ առողջապահության նախարարություն ԱՄ/111-16 2016-01-12	Նախագծի հավելվածի 3-րդ գլխի 15-րդ կետի 4-րդ ենթակետում առաջարկում եմ «պրեպարատ» բառը փոխարինել «պատրաստուկ» բառով: Նախագծի հավելվածում հստակեցման կարիք ունեն 3-րդ գլխի 15-րդ կետի 4-րդ ենթակետի՝ ««Բիպին» պրեպարատի նկատմամբ տզերը ձեռք են բերել որոշ ընկալունակություն», 3-րդ գլխի 15-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «էտալոնային տնտեսություն», 4-րդ գլխի 18-րդ կետի՝ «էլ ավելի էկոլոգիական եղանակով» արտահայտությունները:	Ընդունվել է Ընդունվել է մասամբ	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ Կատարվել է փոփոխություն
ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն 01/13.1/15-16 2016.01.12	1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունից ԵՄ մի շարք երկրներ մեղր արտահանելու թույլտվությունը ի սկզբանե վերապահված է եղել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն): Ծառայությունը իրականացրել է միջազգային փորձագետների հետ հանդիպումներ, ՀՀ օրենսդրական դաշտի մոտարկումներ և 2014-2015 թվականներին կազմվել է մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը, որի համաձայն էլ ՀՀ տարածքում կատարվել է նմուշառումներ և դրանք ուղարկվել են «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ, որտեղ կատարվել են մնացորդային նյութերի հսկողության ծրագրով նախատեսված լաբորատոր փորձարկումներ՝	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

	բացահայտող և հաստատող մեթոդներով, որոնց արդյունքները ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N 898-Ն որոշման 5-րդ կետի համաձայն Ծառայության կողմից յուրաքանչյուր տարվա մինչև մարտի 31-ը ներկայացվում է Եվրոպական հանձնաժողովի սպառողների և առողջապահության գլխավոր տնօրինություն: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ առաջարկվում է հավելվածի 9-րդ կետում «ՀՀ գյուղատնտեսության նախարարության» բառերը փոխարինել «ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության» բառերով: 2. Հավելվածի IV-րդ գլխի կետերը հստակեցման կարիք ունեն, քանի որ վերնագիրը վերաբերում է հայեցակարգի սկզբունքներին և փուլերին, սակայն տեքստում փուլերի վերաբերյալ խոսք չկա, և բաժանում չի երևում, հասկանալի չեն թե ինչ փուլեր են ենթադրվում և ինչ ժամկետներում:	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն 01/96-16 2016.01.14	▪ ՀՀ կառավարության որոշման նախագծի, ինչպես նաև տեղեկանք-հիմնավորման մեջ առաջարկում ենք հստակեցնել «Հայաստանի Հանրապետությունում 2016-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգի» նախագծի ընդունման հիմքերը: ▪ «IV. Հայեցակարգի սկզբունքներն ու փուլերը» գլխի բովանդակությունն առաջարկում ենք համապատասխանեցնել տվյալ գլխի վերնագրին: ▪ Հայեցակարգի իրականացումից ակնկալվող արդյունքները (գլուխ VI) առաջարկում ենք դարձնել առավել պարզ, հստակ և չափելի, ինչպես նաև Հայեցակարգի գործողության ժամկետի ավարտից հետո նախատեսել արդյունքների ամփոփիչ գնահատման իրականացում: ▪ 15-րդ կետի 1-ին ենթակետում նշված մեղվաբուծությամբ զբաղվելու ցանկություն հայտնած ֆերմերների վերապատրաստումից հետո առաջարկում ենք նախատեսել մշտադիտարկում՝ շահառուների կողմից ստացված գիտելիքների ու հմտությունների օգտագործման արդյունավետությունը ստուգելու նպատակով: ▪ 27-րդ կետում առաջարկում ենք հստակեցնել «մի ստվար հատված», իսկ 30-րդ կետում՝ «գործնական քայլեր ձեռնարկել» արտահայտությունները:	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է մասամբ Ընդունվել է Ընդունվել է	Փոփոխությունները կատարվել են տեղեկանք հիմնավորման մեջ IV գլուխը ներկայացվել է նոր խմբագրությամբ Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախագծի մեջ կատարվել են

			համապատասխան փոփոխություններ
ՀՀ բնապահպանության նախարարություն 1/04.3/10036-16 2016.01.14	ՀՀ բնապահպանության նախարարությունը <<Հայաստանի Հանրապետությունում 2016-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չունի: Միաժամանակ հայտնում եմ, որ համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 14-րդ հոդվածի 1-ին մասի այն ենթակա է ռազմավարական գնահատման և փորձաքննության:	Չի ընդունվել	Ֆինանսական միջոցների բացակայության
ՀՀ ֆինանսների նախարարություն 01.1/83-3/919-16 2016.01.18	1. «V. Հայեցակարգի իրականացմանն ուղղված միջոցառումները» գլխի 21-րդ կետում նախատեսվում է մեղվանոցների խոշորացման և նորերի ստեղծման միջոցով 4 տարվա ընթացքում մեղվաընտանիքների թիվն ավելացնել մինչև 50 հազար հատով: Այս միջոցառումը առավելապես հանդիսանում է որպես արդյունք, ուստի առաջարկում ենք V գլխում նախատեսել այդ ակնկալվող արդյունքի ապահովմանն ուղղված միջոցառումները:	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
	Բացի այդ Նախագծով նախատեսվում է մեղվաբուծության ոլորտի առաջատար տնտեսություններից հատկապես դեղին մեղվի 3-5 մեղվաընտանիքներ տրամադրել մեղվաբուծությամբ զբաղվելու ցանկություն հայտնած ֆերմերներին, որին նախորդելու է շահառուների վերապատրաստումը (15-րդ կետի 1-ին ենթակետ և 16-րդ կետ), ապահովել համայնքներում առկա մեղվափեթակների ճիշտ հաշվառումը (22-րդ կետ), արտադրական մեղվանոցներում մեղվամայրերի 50 %-ի ամենամյա փոխարինում առավել երիտասարդ մայրերով (25-րդ կետ) և այլն: Այդ առումով հայտնում ենք, որ ՀՀ Կառավարության 22.01.2015թ. N2 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցի» 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ հայեցակարգի մեջ պետք է նախատեսվի նաև ֆինանսական գնահատականներ, այդ թվում՝ օգտագործվելիք ֆինանսական և այլ ռեսուրսները և այլն: Ուստի առաջարկում ենք հստակեցնել այդ	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

	միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները և ֆինանսական միջոցների չափերը (կից հաշվարկ-հիմնավորումներով): 2. Մեղվաբուծության հետ կապված ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով նախատեսված է «ԵՄ-ի փորձարկման ռեֆերենս մեթոդներով մեղրի և ձկան փորձաքննությունների ծառայություններ» ծրագիրը, ուստի առաջարկում ենք Հայեցակարգում անդրադառնալ նաև այդ ծրագրի իրականացման ընթացքին: 3. «III. Հայեցակարգի նպատակը, խնդիրները և դրանց լուծման գործողությունները» գլխի 15-րդ կետի 4-ին ենթակետում նշվում է, որ «Բիպին» պրեպարատի նկատմամբ տզերը ձեռք են բերել որոշ ընկալունակություն, այդ իսկ պատճառով առաջարկվում է այն փոխել ավելի արդիական պրեպարատով: Մինչդեռ «IV. Հայեցակարգի սկզբունքները և փուլերը» գլխի 20-րդ կետում ուղղակիորեն նախատեսվում է մեղուների վարրոատոզ հիվանդությունը բուժելու համար գյուղացիական տնտեսություններին անհատույց հատկացնել «Բիպին» պրեպարատը: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք լրամշակել նախագիծը՝ հաշվի առնելով վերը նշված դիտողությունները և առաջարկությունները:	Ընդունվել է Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
ՀՀ գիտության և կրթության նախարարություն 01/06.1/310-16 2016.01.19	ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, կարևորելով մեղվաբուծության զարգացումը ՀՀ-ում, 2013 թվականին համապատասխան մասնագետների մասնակցությամբ մշակել է «Մեղվաբուծություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը, որը 2014թ. փորձարկման նպատակով ներդրվել է միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու և աշխատաշուկայի ներկայիս պահանջներին համապատասխան մեղվաբույծ որակավորմամբ մասնագետներ պատրաստելու նպատակով, առաջարկում եմ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին նույնպես տրամադրել մեղվաընտանիքներ և անհրաժեշտ պարագաներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշման նախագծով նախատեսվում է մեղվաընտանիքների տրամադրում՝ նախապատվությունը տալով սահմանամերձ համայնքների բնակիչներին, պտղաբուծությամբ զբաղվող	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

	ֆերմերներին, որին նախորդելու է շահառուների վերապատրաստում:		
ՀՀ արդարադատության նախարարություն 01/14/1359-16 2016-02-10	1/ «Հայաստանի Հանրապետությունում 2016-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) անվանումից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշում» բառերը և «Ն» տառը, նախաբանից՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է» բառերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսքը ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մասին է:	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
	2/ Նախագծի անվանման մեջ «2015» թիվն անհրաժեշտ է փոխարինել «2016» թվով:	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
	3/ Նախագծի 1-ին կետով հավանության արժանացող Հայաստանի Հանրապետությունում 2016-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգի (այսուհետ՝ հայեցակարգ) 15-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մեղվաընտանիքների տրամադրմանը նախորդելու է *շահառուների վերապատրաստում, որից հետո նրանց գիտելիքների թեստավորում՝* մեղվաընտանիքները պատշաճ որակով խնամելու, հիվանդությունների հնարավոր տարածումը կանխելու ուղղությամբ: Մինչդեռ պարզ չէ, թե ինչ կարգով է իրականացվելու գիտելիքների թեստավորումը և ինչ իրավական հետևանքներ են դրանք առաջացնելու: Նույն դիտողությունը վերաբերում է նաև հայեցակարգի 23-րդ կետով նախատեսված համայնքներում մեղվափեթակների հաշվառմանը, քանի որ պարզ չէ, թե ինչ իրավական ակտով է հաստատվելու դրանց հաշվառման կարգը:	Ընդունվել է	Նշված դրույթները նախագծից հանվել են
	4/ Նախագծում, որպես առանձին կետ, անհրաժեշտ է նախատեսել հանձնարարական, որի համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարը հիշյալ հայեցակարգն ուժի մեջ մտնելուց հետո պետք է ՀՀ կառավարություն ներկայացնի հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկ, որով կսահմանվեն կոնկրետ միջոցառումները, պատասխանատու կատարողները, միջոցառումների իրականացման ժամկետները, ֆինանսավորման աղբյուրները և այլն: Հիշյալ առաջարկությունները բխում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի նիստի N 2 արձանագրային որոշման առաջին կետով հավանության	Ընդունվել է	

	արժանացած հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցի պահանջներից:		
ՀՀ հանրային խորհուրդ Ե-34 2016.05.11	Առաջարկություններ և առարկություններ չկան		
<<Մեղվաբույծների ազգային միավորում>> հասարակական կազմակերպություն ա/հ 2016.05.06	Պարագրաֆ 4 21/3 կետ 1.Վարատոզ հիվանդության դեմ բուժման նպատակով տրվել է գյուտ, որը գրանցվել է ՀՀ համապատասխան կազմակերպությունում: Փորձարկվել է մեղվաբույծների ազգային միավորման փորձնային տնտեսությունում և կիրառվում է միավորման առաջատար մեղվաբույծների մեղվանոցներում, օգտագործման եղանակով մեկ մեղվաընտանիքում օգտագործվում է մեկ բոռաբջիջում մոմաթերթ: Վարատոզ տիզը գվում է միայն տվյալ մոմահացի բջջի մեջ,որը հասունանում է 12 օրվա ընթացքում, իսկ բոռը հասունանում է 24 օրվա ընթացքում, այսինքն մինչ բոռը հասունանա տիզը տալիս է 2 սերունդ, 6 զույգով: Բոռի հասունացման շրջանում վերացնում են բոռաբջիջները և վարատոզ տիզը: Լվացվում է մոմահացը և նորից սրվում է փեթակի մեջ, որը կրկնվում է: Տվյալ մեղվաընտանիքը տալիս է նաև 7կգ հավելյալ էկոլոգիապես մաքուր մեղր: Տվլայ գյուտը տպվել է նաև Եվրասիական պարբերականում և օգտագործվում է մի շարք պետությունների մեղվաբուծական տնտեսություններում: 2.Թունաքիմիկատներով բուժման ժամանակ օգտագործվում է հասարակ ջրի փոխարեն ակտիվացված ջուր/իոնացված արծաթաջուր, մեռյալ ջուր և այլ/,որը նույնպես փորձարկվել է փորձնական տնտեսությունում: Ունենալով համագործակցության պայմանագիր ՀՀ տեխնոլոգիական ակադեմիայի հետ, վերջինս տրամադրել է սարքավորումները, ակտիվացված ջրի ստացման համար: Պարագրաֆ 4 22/2 ՀՀ առողջապահության նախարարությունը պետք է թույլատրի մեղվամթերքներով բուժման մեթոդիկան կիրառելու բազմաթիվ հիվանդությունների դիմաց առավելապես ոչ վարակիչ հիվանդությունների	Ընդունվել է Ընդունվել է ի գիտություն	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

	դեմ/սրտային, շաքարախտի և քաղցկեղի/դեմ, որի հավասարը չկա: Բացի մեղրից հնարավոր է արտադրել բազմաթիվ մեղվամթերքներ ակնամոմ, մեղվակաթ, ծաղկափոշի, մեղվաթույն և այլն. որոնց իրացումից մեղվաբույծը կստանա հրաշալի օգուտներ: Վերոհիշյալ մթերքներից առաջադեմ երկրներում արտադրվում է դեղամիջոցներ և հավելումներ: Հայաստանում նույնպես արտադրվել է մեղվակաթից ՍՈՏԱ անվանումով դեղամիջոց, հնարավոր եմ համարում միավորման կազմում ընդգրկված փորձառու մեղվաբույծերի միջոցով արտադրելու խոշորամասշտաբ մեղվակաթ և այլն, որոնց կիրառումը հիմնականում պետք է կիրառվի Հայաստանի հանրապետությունում, իսկ ավելցուկը կարտահանվի արտերկիր: Հայաստանի դեղագործական գործարանները իրավասու են և կարող են վերամշակել և արտադրել դեղամիջոցները և հավելումները: Տվյալ դեպքում կշահի ժողովուրդը, կշահի պետությունը:		
<<ԱպիԱրմենիա>> արհեստավարժ մեղվաբույծների ազգային միավորում>> հասարակական կազմակերպություն ա/հ 2016.05.06	1. Մեղվաբույծներին տրամադրել աջակցություն սուբսիդիաների տեսքով՝ մեղվանոցների գույքի նորացման և արդիականացման համար: 2. Մեղվաբուծության և մեղվի հանդեպ հանրության շրջանում ուշադրությունը և սերը մեծացնելու նպատակով մետաղադրամների հետնամասում մեղվի նկարի տպագրության կազմակերպում, ինչպես նաև դրոշմանիշերի վրա: 3. Հայաստանի մեղվաբուծության ճանաչման նպատակով կարճամետրաժ ֆիլմի նկարահանում և ցուցադրում ինչպես Հայաստանում հանրության շրջանում, այնպես էլ արտասահմանյան մեղվաբուծական հավաքների, կոնֆերանսների ժամանակ մեղվաբույծների և մեղվամթերքներով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում: 4. Կազմակերպել միջազգային մեղվաբուծական հավաքների, կոնֆերանսների անցկացում Հայաստանում:	Ընդունվել է Ընդունվել է ի գիտություն Ընդունվել է Ընդունվել է	2011թ.-ից ՀՀ գյուղացիական տնտեսություններին տրամադրվում է սուբսիդավորված վարկեր և մինչ օրս շարունակվում է Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

<<Մեղվապահների ազգային ֆեդերացիա>> հասարակական կազմակերպություն N033 2016.05.16	<<Հայաստանի Հանրապետությունում 2016-2020թթ. մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը ողջունում եմ՝ անձամբ և <<Մեղվապահների ազգային ֆեդերացիայի>> 10 մարզային կառույցների մասնագետ մեղվաբույծների հետ: Ցանկանում եմ արագ լուծում տալ այս կարևորագույն ճյուղի զարգացման գործում, առանց որի անհնար է մարդկության գոյությունը երկրագնդի վրա: Ինչպես Ձեզ հայտնի է մեղվաբուծության օրենքը ներկայացվել է <<Մուլտի Ագրո>> Գիտաարտադրական կենտրոն ՍՊԸ-ի կողմից, անվանի գիտնականների նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ: Այն հաստատվել է 2009թ. ապրիլին: Սակայն առ այսօր նման ողջունելի առաջարկ չի եղել մեղվաբուծության զարգացման նպատակով: Շնորհակալություն ոլորտի ողջ մասնագետների անունից նման խիստ անհրաժեշտ մեղվաբուծության զարգացման հայեցակարգը կյանքի կոչելու համար: Քանի որ ԱՄՆ-ում, Գերմանիայում կա մեղվաընտանիքների մեծաքանակ անկում <<Կոլապս>>, իսկ մեր հանրապետությունում ճիշտ հակառակը: 2003թ. առկա էր 77000 մեղվաընտանիք, իսկ այսօր մեր վիճակագրական տվյալների հիման վրա առկա է 234000 մեղվաընտանիք: Սակայն դա մեր Հանրապետության մեղվաընտանիքների ճշգրիտ քանակը չե, քանի որ մեղվապահները ինչ-ինչ պատճառներով չեն կամենում ստույգ քանակը հայտնել: Ես իմ բազմաթիվ այցելությունների ընթացքում պարզել եմ, որ մեր հանրապետությունում ներկա վիճակում փաստացի կա ոչ պակաս 560000 մեղվաընտանիք, ես դա հայտնում եմ որպես <<Մեղվապահների ազգային ֆեդերացիայի>> նախագահ: Շնորհակալություն մեր շահագրգիռ ղեկավարներին, որոնք կյանքի պիտի կոչեն Աստծո տված անգնահատելի այս ճյուղի զարգացմանը, որտեղ աշխատում եմ շուրջ 52 տարի: Հավանում եմ և ողջունում եմ այս գեղեցիկ ազգանվեր ծրագրի կատարմանը: Ցանկանում եմ արագ լուծում, մեղվաբուծությունը սպասել չի սիրում:	Ընդունվել է ի գիտություն	

	Ծանոթություն՝ 2005թ. կազմակերպել եմ 1300մ/ը 2006թ. կազմակերպել եմ 890մ/ը Վաճառել եմ Տավուշի և Գեղարքունիքի մարզերում 2190մ/ը		
<<Հայաստանի Ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամ 32/01-10-617 2016.05.16	**<u>Ներածություն</u>** 1-ին կետում վերևից 4-րդ տողում **<<ալպիականից>>** առաջ ավելացնել նաև **<<ենթալպիական>>** բառը, 7-րդ տողում **<<մեղվամթերք>>** բառը փոխարինել **<<մեղվաբուծական այլ մթերքներ>>** բառերով: 2-րդ կետի վերևից 2-րդ տողը շարադրել հետևյալ բովանդակությամբ - **<<պայմանավորված է Հայաստանի մեղվաբուծության կերաբազայով, որի ճիշտ օգտագործման դեպքում կարելի է ստանալ բարձր որակական և համային հատկանիշներով մեղր>>:** 5-րդ կետը առաջարկվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ **<<մեղուների միջոցով /գյուղատնտեսական կուլտուրաների խաչաձև փոշոտմամբ բարձրանում է բերքի որակական և քանակական հատկանիշները: Մեղվաբուծության դերն ու նշանակությունը ագրոէկոլոգիական, բուսաբուծության և այգեգործության զարգացման գործում անփոխարինելի է>>:**	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
	<u>II գլուխ</u> 8-րդ կետը առաջարկվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ **<<Հայաստանում տարածված են դեղին և գորշ մեղուների պոպուլյացիաները: Հյուսիսային տարածաշրջաններում առավել արդյունավետ է գորշ, իսկ հարավում՝ դեղին մեղուների բուծումը, խնամքը և բազմացումը>>:** 10-րդ կետի 3-րդ տողում **<<ընկերությունն>>** բառը փոխարինել **<<ընկերությունը>>** բառով:	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
	<u>III գլուխ</u> 17-րդ կետի 2-րդ տողում **կրթական կարողությունների զարգացման** մտքից հետո առաջարկվում է ավելացնել **Հանրապետությունում բուծվող մեղուների գենոֆոնդի պահպանման և կատարելագործման բառակապակցությունը**, 3-րդ տողում **<<ենթամթերքներ>>** բառը փոխարինել **<<այլ մթերքների ստացման, ապահովելով նպաստելու ոլորտի զարգացմանը>>** պարբերությունով: **18-րդ կետի** 2-րդ ենթակետը առաջարկվում է խմբագրել և ավելացնել 6-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ **բուծվող մեղվացեղերի պահպանում և բարելավում: 19-րդ կետի** 2-րդ ենթակետի 5-րդ տողում **<<մասնակցությանը>>** բառը	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

	փոխարինել <<**մասնակցությունը**>> բառով: 3-րդ ենթակետի առաջին տողում <<**վարրոատոզ**>> բառից հետո առաջարկվում է ավելացնել << **և այլ**>> բառը և դրանից հետո <<**հիվանդության**>> բառը փոխարինել <<**հիվանդությունների**>> բառով: Նույն կետի 2-րդ տողում փակագծի մեջ <<**էկոստոպ**>> բառից հետո առաջարկվում է ավելացնել << **և այլ**>> բառը: 5-րդ ենթակետի առջին տողում <<**ոլորտի**>> բառից հետո առաջարկվում է ավելացնել <<**արդի**>> բառը, <<**միջոցների**>> բառից հետո ավելացնել <<**և մեթոդների**>> միտքը, <<**բուժման**>> բառից հետո ավելացնել <<**և բուծման**>> միտքը: Նույն ենթակետի 2-րդ տողում <<**կիրառման**>> բառից հետո ավելացնել <<**խթանում և**>> միտքը:	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
	IV գլուխ- Առաջարկվում է վերնագրից հանել <<**համար**>> բառը: Կարծում ենք այս բաժինը կարիք չկա բաժանել փուլերի, քանի, որ երկու փուլերում էլ նախատեսվող աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել տևական /պերմանենտ/ և ժամանակի սահմանափակումը նպատակահարմար չէ:		
	21-րդ կետի առաջին ենթակետի 4-րդ տողում **'միջոցով'** բառից հետո առաջարկվում է ավելացնել **'տրամադրում'** բառը և հանել հաջորդող **'բաշխում'** բառը: 2-րդ կետի 3-րդ տողում **'հեռուստատեսային'** բառը փոխարինել **'ռադիոհեռուստատեսային'** բառով: 3-րդ կետի 4-րդ տողում **'դեղորայքի'** բառից հետո առաջարկվում է ավելացնել **'շարունակական'** բառը:	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
	22-րդ կետի 2-րդ ենթակետի 2-րդ տողում **'հաստատությունների'** բառը հանել քանի, որ այն կրկնվում է: 3-րդ ենթակետում փակագծերի մեջ **'մեղր'** բառից հետո առաջարկվում է ավելացնել **'մեղվամոմ'** բառը, **'մեղվակաթ'** բառը փոխել **'մայրակաթ'** բառով, ավելացնել **'մեղվի թույն'** և այլն: Նույն ենթակետում ավելացնել հետևյալ պարբերությունը՝ **'Սահմանված կարգով իրականացնել մեղրի և մեղվաբուծական մթերքների ստանդարտավորման և հավաստագրման գործընթացները':**	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

	V գլուխ- 23-րդ կետի 3-րդ տողում **'զարգացման'** բառից հետո առաջարկվում է ավելացնել հետևյալ միտքը՝ **'և առկա բնական ռեսուսների ռացիոնալ /արդյունավետ/ օգտագործման'**: **VI գլուխ**- 26-րդ կետի 2-րդ տողում **'կառավարման'** բառից հետո առաջարկվում է ավելացնել **'գիտակրթական հաստատությունների,'** բառակապակցությունը:	Ընդունվել է Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ
ՀՀ կառավարություն 02/23.26/8604-16 2016.06.15 ՀՀ կառավարություն 02/23.24/[369509]-16 2016.08.11	Առաջարկվում է նախագիծը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 2 արձանագրային որոշման պահանջներին, մասնավորապես՝ ա) անհրաժեշտ է ներառել տեղեկատվություն վերջին տարիներին մեղվաբուծության բնագավառում առկա խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ և թե որքան ֆինանսավորում է պահանջվել այդ ամենի համար, բ) նախագծով ներկայացված խնդիրներին անհրաժեշտ է տալ համապատասխան լուծումներ և ներկայացնել դրանցից յուրաքանչյուրի իրականացման դեպքում հնարավոր հետևանքները և հավանական ռիսկերը՝ արտահայտված ֆինանսական գնահատականներով, այդ թվում՝ օգտագործվելիք ֆինանսական և այլ ռեսուրսները, ներդրումները և այլ ծախսերը: գ) ինչպես նաև նախագիծը լրամշակել՝ հաշվի առնելով վերը նշված ՀՀ կառավարության արձանագրային որոշման հավելվածի 6-րդ կետի պահանջները: 1) որոշման նախագիծը լրամշակել ՀՀ ֆինանսների նախարարի առաջին	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախագիծը լրամշակվել է Նախագծի մեջ

	տեղակալ Պավել Սաֆարյանի առաջարկությամբ, մասնավորապես՝ քննարկել «2015-2017 թվականների Եվրամիության փորձարկման ռեֆերենս մեթոդներով ձկան և մեղրի փորձաքննություններ» ծրագրի ներառման նպատակահարմարությունը հայեցակարգում: Ինչպես նաև ծրագրի ֆինանսավորման աղբյուրներից հանել «ՀՀ պետական բյուջե» բառերը և տալ հայեցակարգի իրագործման ֆինանսական գնահատականը.	Ընդունվել է	կատարվել են համապատասխան փոփոխություններ
	2) ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Մակար Ղամբարյանի առաջարկությամբ խմբագրել հայեցակարգի արդյունքային ցուցանիշները՝ համեմատականով ներկայացնել նախորդ տարիների փաստացի աճի ցուցանիշները և հայեցակարգի իրագործման արդյունքում դրանց փոփոխության կանխատեսումը. 3) որոշման նախագծի վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:	Ընդունվել է	Նախագծի մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.	**Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**
	<<Հայաստանի Հանրապետությունում 2017-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի կատարմամբ, ինչպես նաև հանրապետությունում մեղվաբուծությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և անհատ մեղվաբույծների հետ քննարկումների արդյունքում արված առաջարկությունների հիման վրա:
2.	**Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները**
	Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության հարուստ փորձը կուտակվել է դարեր շարունակ այս ոլորտում իրականացված բազմաբնույթ գործունեության արդյունքում: Ըստ ազգային վիճակագրական պետական ծառայության տվյալների Հայաստանի Հանրապետությունում 01.01.2016 թվականի դրությամբ հաշվառվել է շուրջ 241546 մեղվաընտանիք: Ներկայումս հանրապետությունում տարեկան արտադրվում է 3500-4000 տոննա մեղր: Արտադրվող մեղրի որակական հատկանիշները հնարավորություն են ընձեռել այն սահմանափակ քանակությամբ արտահանել ԱՊՀ երկրներ, ԱՄՆ, Չինաստան, Կիպրոս և այլն: Հաշվի առնելով այն, որ Հայաստանում մեղվաբուծության զարգացման համար կան բավականին լավ նախադրյալներ, ինչպես նաև որ հանրապետությունում արտադրվող մեղրն աչքի է ընկնում իր համային և որակական հատկանիշներով, որի արդյունքում մեծ է պահանջարկը, ուստի նախատեսվում է 2017-2020 թվականներին ավելացնել ինչպես մեղվաընտանիքների քանակությունը, այնպես էլ մեղրի արտահանման ծավալները:
3.	**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**
	Նվազեցնել մեր հանրապետությունում ստացվող ապրանքային մեղրի վրա կատարվող ծախսերը, բարելավել մեղվանոցների զոոտեխնիկական և անասնաբուժասանիտարական սպասարկումը, կատարելագործել կրթական համակարգն ու մեղվաբուծության բնագավառում բարձրացնել կադրերի վերապատրաստման և որակավորման մակարդակը:
4.	**Կարգավորման առարկան**
	Հայեցակարգը հնարավորություն կընձեռի համապատասխան մարտավարություն իրականացնելու շնորհիվ հուսալի նախադրյալներ ստեղծել Հայաստանի

	Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման համար: Հայեցակարգը կնպաստի մեղվաբուծությամբ զբաղվող կայացած համակարգերի ձևավորմանը և այս ոլորտը գրավիչ կդարձնի հայրենական և օտարերկրյա ներդրողների համար: Հայեցակարգը կնպաստի հանրապետությունում մեղրի արտադրության ծավալների և արտահանման ծավալների ավելացմանը:
5.	**Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքները**
	Հայեցակարգի ընդունումը հնարավորություն կընձեռի համապատասխան մարտավարություն իրականացնելու շնորհիվ հուսալի նախադրյալներ ստեղծել Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման համար: Հայեցակարգի իրականացման արդյունքում սահմանամերձ համայնքներում, որտեղ խիստ վտանգավոր է զբաղվել հողագործությամբ, հնարավորություն կստեղծվի բնակչությանը զբաղվել մեղվաբուծությամբ և ունենալ որոշակի եկամուտ: Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման հայեցակարգի ընդունումը կնպաստի ինչպես մեղրի արտադրության, այնպես էլ մեղրի արտահանման ծավալների ավելացմանը:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	
1.	<<Հայաստանի Հանրապետությունում 2017-2020 թվականների մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազում չի նախատեսում:

ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ	
1.	**Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը**
	Այլ իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:
2.	**Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը**
	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը բացակայում է:
3.	**Այլ տեղեկություններ**
	-

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	
1.	**Հասարակությանը նախագծի մասին իրազեկումը**
	<<Հայաստանի Հանրապետությունում 2017-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի քննարկմանը հասարակությունը մասնակցություն չի ունեցել և դրա մասին հասարակությանը չի իրազեկվել:
2.	**Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին**
	<<Հայաստանի Հանրապետությունում 2017-2020 թվականներին մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակմանը մասնակցել են <<Մեղվապահների ազգային ֆեդերացիա>>, <<ՀՀ մեղվաբույծների ազգային միավորում>>, <<ԱպիԱրմենիա>> արհեստավարժ մեղվաբույծների ազգային միավորում>> հասարակական կազմակերպությունները:
3.	**Այլ տեղեկություններ**